№ 44 Մարտի 18 (30) 1880 Մարտի 18 (30) № 44

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր առաջարկութիւնը։—Ներքին տեսութիւն։ Սովելոց խնամող մասնաժողովի շրջաբերականը։ Նամակ Ակէքսանդրապոլից։ Նամակ Դիլիջանից։ Նամակ Նոր-Բայազէտից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Պարսկաստան։ «Morning Post» լրագրի յօդուածը։—«Մշակի» հեռագիրներ։— Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Խենթը։

ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Վանի սովը, իբրև սով, դեռ նոր է սկսվում։ Այժմ պէտք է մենք մեր ջանքը բազմապատկենք, մինչև այժմ մեր արածը թեթև բան էր։

Այդ պատճառով մենք համարձակվում ենք առաջարկել հետեւեալը։

Բացի Կ. Պոլսի մէջ հիմնված սովելոց համար կոմիտէից, կազմել և մի նորը Թիֆլիսում։

Ուղղակի յարաբերութիւն բանալ Վանի հետ։

Մի գործակատար ուղարկել Վան։

Վանի մէջ օժանդակ կոմիտէտ հիմնել։

Ռուսաց սահմանից, ուր որ փոստը վերջանում է, օրինակ Իգդիրից, մինչև Վան, երկու կամ երեք հատ սուրհանդակ (нарочный) ունենալ, որոնք շարունակ տեղեկութիւն տանեն և բերեն։

Ռուսաստանի բոլոր հայաբնակ տեղերում Թիֆլիսի կոմիտէտի ճիւղեր ունենալ, որոնց նախագահներ կը լինեն այն անձինք, որոնք մինչև այժմ գաւառներում «Մշակի» կամ ուրիշ լրագիրների միջոցով ցոյց տուին որ իրանք ամենալաւ աշխատողներն են։

Բագու փոքրիկ քաղաքը մենակ մինչև այժմ մօտ 7000 բուբլ նուիրեց, իսկ Թիֆլիսը իբրև հարստութեան կենտրոն, համեմատաբար դեռ չէ շարժվել։ Այստեղից ուղարկված ամենամեծ գումարները Թիֆլիսից չեն, այլ բոլորն էլ աննշան տեղերից են։ Այստեղի աղբիւրները պիտի բացվեն։

Դիմել վաճառականներին, որպէս զի հին կտորներ, չը ծախված մահուդեղէններ, ֆլանել և այլ բրդեղէն և բամբակեղէն կերպասներ նուիրեն։

Տներից և ընտանիքներից հին կամ կիսամաշ շորերը հարկաւոր է ժողովել, որովհետև Վանի մէջ սովի հետ կայ աղքատութիւն և մերկութիւն։

Կանանց կոմիտէտ կազմել ձերմակեղէններ պատրաստելու և կարելու համար։

Թիֆլիսում պէտք է ամէն տեսակ, օրէնքով թոյլ տուած միջոցներով, նուէրներ ժողովել, գումարներ կազմել, հանգանակութիւն անել, տուփերով (кружечный сборъ)։

Վանի գործակատարը հաւատարիմ և գործունեայ մարդ լինելով, պէտք է իր օգնողները գտնէ և Խարբերդից, Բաղէշից, Բալուից կամ ուրիշ տեղերից հայ բերել տայ։

Աշխերտի և Բայազէտի մէջ կոմիտէտը պէտք է իր օգնականներն ունենայ։

Կոմիտէտը նոյն չափով պէտք է ուշադրութիւն դարձնէ քաղաքի և գիւղերի բնակիչների վրա, պէտք է աշխատի, որքան հնար է իրան, խտրութիւն չը դնել ոչ թէ միայն այլ և այլ դաւանութիւններին պատկանող հայերի մէջ, բայց և սովի անգութ հարուածների տակ նոյն չափով տանջվող այլ և այլ ցեղերին պատկանող Վասպուրականի բոլոր բնակիչների մէջ, որով առաջին քայլ արած կը լինի բարոյական կապ և համերաշխութիւն վերականգնեցնել Հայաստանի բոլոր բնակիչների մէջ։

Ա. Ամիրխանեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՅՈՑ ԽՆԱՄՈՂ Կ. ՊՕԼՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

Հասարակութեան ուշադրութեան ենք տալիս մեր լրագրի էջերում «Սովելոց խնամող Կ. Պոլսի կենտրոնական մասնաժողովի հետևեալ շրջաբերականը։

«Որպէս ծանօթ է ձեր առաքինի ազգասիրութիւնն, մարդակեր սով մի ի ժամուս անհնարին կը տանջէ զբնդաւառ մեր գաւառի բնակիչներ։ Ամենայն ոք գիտէ, թէ ինչպէս ամենայն ինչ, զոր ունէին, ի ձեռն ոմանց ի Հայաստանի գաւառաց ի Պարսկաստան գնացեալ, ի ձեռն Թուրքաց գրաւեալ է, զոր ոչ միայն զանազան տեսակ հարկերով, զոր ի Թուրքաց ի Հայոց ի գանձ ի գանձ ի գանձ

յաստան, ի նշանաւոր մասունս իւր ի Վան, ի Պայազիտ, յԱլաշկերտ և ի Տիգրանակերտ:

«Ամենուրեք սով միշտ տհաւոր, ասատոտից աղետալիցն այս չար, անմման մոլեգնութեամբ կընթանայ:

«Ճանապարհաց անբաւականութեամբ և մերթ ընդ մերթ հեռագրական հաղորդակցութեանց պակասութեամբն քաջալերեալ կը վայրագի, անսովոր ձմերան ի խստութենէ սովելոյն և մարդասիրին իրերաց ձգեալ աչքն ի կարկառման սիրոյ և կարօտոյ սառուցեալ տեսանելով, զանմահ շահասիրութիւն անդամ իւր սահմանաց վանել կը յանդգնի:

«Փչեցինք մեք, Տէր, եղբայրական վառ շընչով սովոյ դաշնակից այս սառնամանեաց վրայ, այլ ոչ հալեցան, զի ամբողջ մարդկութեան վառ ոգին միայն կարող է, Տէր, սովապահ այս սառուց սաստեալ մերթ գլացեալ մերթ շըռայլեալ զտուրս բնութեան զուգակշռել:

«Ցայժ հեռի եմք, Տէր, մեր թշուառ մարդկան ձայնն ամբողջ իւրեանց ընտանեաց հասուցանելու ի կարողութենէ: Ուստի Զեզ եկաք, Տէր, մերձաւորագոյն եղբարց հարազատից մեր կարօտն խմացուցանել, զի այս պիսի տառապանաց աւուրց մէջ, Զեզ չը զիմել որչափ մեզ համար յիմարութիւն՝ նոյնչափ առաքինութեանդ թերահաւատելով ըզ Զեզ նախատել էր:

«Ողորմածութեամբ թշուառաց վասն ներկայի հաց ջամբել, խմաստութեամբ վասն ապագայի սերմն հացի պտղաստել, իսկ որ ահաւորն է, Տէր, ամարան դրան հանդէպ Մարտ և Ապրել ամսոց հետ անման կուսոյ պարտաւորեալ եմք:

«Կարօտեալն այսօր հացի, ո՞ տէր, յիշեցէք հացի տէրն է, արդ սովալուկ լքեալն դարեր ու դարեր հարց սուրբ աւանդից վըրայ հսկողն է, հեզութեամբ, արիութեամբ, աչալրջութեամբ, ամենայն դրշակաց ներքև բարի հպատակ և արդար աշխատաւոր հայուն՝ տնապահ աւագ եղբայրն է:

«Ողորմեցէք ապա մեզ Տէր, յանուն այսպիսի թշուառաց և արագ տուք մեզ օգնութեանցդ ժամանել ձեռօք «Մշակ», «Մեղու» և «Փորձ» պատուական լրագրոց ազնիւ և առաքինի խմբագրապետաց, որոց օժանդակութեան պատահել պատիւ ունեցանք:

«Զառաքինիդ, հին բարեգործութեանցդ անուշ յիշատակին աւանդելով և նորանոր ոգեզուարձ օրհնութիւններ ի վերայ գերդաստանիդ և սուրբ ողորմածութեան ձայնին անսացողայն ի վերայ հրաւիրելով, եմք ամենախորին յարգանօք ձեր միշտ շնորհապարտք:»

Առենապետ՝ Սերովբէ Կիւրղէղեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

30 փետրվարի

Մարդասիրական զգացմունքը պահանջում է կարեկցութիւն և զութ այն թշուառ նեղեալներին, որոնց վիճակված է լինել սովի սոսկալի զոհեր։ Այդպիսի դառն և ցաւալի դրութեան մէջ լինելով և մեր վանեցի եղբայրներն, մի քաղցր պարտականութիւն համարեցի ժողովել մի քանի ծանօթներից նուիրատուութիւններ, որոնցից գոյացած գումարն է 97 բուբ. 10 կօպ.։ Ահա ուղարկելով խմբագրութեանդ, խնդրում եմ հասցնել Հայաստանի սովեալներին խնամող մասնաժողովին, տպագրելով ձեր լրագրի մէջ նուիրատուների անունները, որոնք են։

Տէր-Մանուկ Տօնօյանց 2 բ., Մահտեսի Սարգիս Խաչօյանց 10 բ., Մարտիրոս Երանոսեանց 5 բ., Ալէքսանդր Եաղչեան 5 բ., Հաճիպապ Գէորգեան 4 բ., Մելիք Դասպարեան Սօղոմեանց 3 բ., Օհաննէս Յակոբեան 3 բ., Բաղդասար Ղօյթուղճեան 3 բ., Արտաշէս Խոյցեան 3 բ., Օհաննէս Տէր-Դաւթեան 3 բ., Գալուստ Մանուկեանց 3 բ., Հայ-կաթոլիկ 2 բ., Յակոբ Աստոեան 2 բ., Անյայտ ումն 2 բ., Յարութիւն Գրիգորեան 2 բ., Կիրակոս Պողոսեան 2 բ., Մանուկ Սիմայեան 2 բ., Օհաննէս Խօջայեան 2 բ., Արսէն Փամպուղճեան 1 բ., Մինաս Շարխաթունեան 1 բ., Պետրոս Գէորգեան 1 բ., Մկրտիչ Խաչատուրեան 1 բ., Սըտեփան Պատուրմաճեան 1 բ., Միխակ Տէր-Օհանէսեան 1 բ., Մկրտիչ Մ. Կարապետեան (զարսեցի) 1 բ., Յարութիւն Գէորգեան 1 բ., Մկրտիչ Խաչատեանց 1 բ., Օհաննէս Թեւանկեան 1 բ., Սէրոբ Օսմայլեան 1 բ., Օհաննէս Բուրմեղեան 1 բ., Ռուբէն Սէյլանեան 1 բ., Եղիազար Սանօյեան 1 բ., Մկրտիչ Այդինեան 1 բ., Եղիկ Անմեղեկեան 1 բ., Մատթէոս Ղարիպեան 1 բ., Յարութիւն Թօքմաճեանց 1 բ., Արսէն Վ. Կրիտեան 1 բ., Ներսէս Ղարիպեան 1 բ., Նիկոլա Աղապապեան 1 բ., Գրիգոր Աղաճանեան 1 բ., Աւագ Յակոբեան 1 բ., Աւոն Մկրտիչով 1 բ., Աղաճան Եաղճիեան 1 բ., Օհաննէս Կունճուլեան 1 բ., Սէթ Ղամչեան 1 բ., Մացակ Մանուկեան 1 բ., Միխակ Բուխկեան 1 բ., Միխակ Ագուլեան 1 բ., Արսէն Մօծակեանց 80 կ., Աղէքսանդր Վռատչեանց 60 կ., Յարութիւն Սահակեան 50 կ., Հաճիպապ Թօքմաչեանց 50 կ., Խաչատուր Օհանով 50 կ., Խաչատուր Թաթոսեան 50 կ., Աւետիս Գասպարեան 50 կ., Թաթոս Աղէքսանեան 50 կ., Գէորգ Տէր-Պետրոսեան 50 կ., Դերենիկ Խաժակեան 50 կ., Օհաննէս Թաթոսեան 50 կ., Արսէն Տէր-Պողոսեան 50 կ., Մի հայ 50 կ., Գէորգ Մկրտչեան 50 կ., Յարութիւն Ղազարեանց 40 կ., Դաւիթ Ազասխաչեանց 40 կ., Օհաննէս Թորոսեան 20 կ., Օհաննէս Մուրատեան 20 կ.։ Յարութիւն Փիլոսեան 20 կ., Գերոբ Վարթիկեան 20 կ., Վրացի ումն 10 կ.։

Գումարն է 97 բ. 10 կ.։

Հայ-Կաթոլիկ

ՆԱՄԱԿ ԴԻՎԻԶԱՆԻՑ

—

Մարտի 4-ին

Լինելով Դիվիզիան գիւղի ծխական դպրոցի ուսուցիչ, պարտք համարեցի հաւաքել դրամական օգնութիւն յօգուտ Վանայ սովելոց։ Հաւաքածս ընդամենն է 30 բուբլ, որը ուղարկում եմ ձեզ, հասուցանելու ուր հարկն է։

Միհրան Բաղդասարեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

—

Փետրվարի 27

Առաջին նամակաւ 17 փետրվարի հաղորդել էի թէ Նոր-Բայազէտում ևս բացվել է ստորագրութիւն յօգուտ Վանայ սովատանջների և նուիրատուութիւնը հասել է մօտ 70 բ.։ Ստորագրութեան շարունակութեամբն գումարն մինչև այսօր հասաւ 137 բուբլ 7 կօպ, որ ուղարկելով ձեզ ըստ պատկանելոյն հասցնելոյ համար, խնդրում եմ բարեհաճել հրատարակել նուիրատուաց անունները։

Յ. Մամիկոնեան 10 բ., Մ. Նիկողոսեանց 10 բ., Յ. Բուտումեանց 10 բ., Ա. վարդապետ Համազասպեանց 5 բ., Ս. Խան-Ազեանց 5 բ., Զ. Ատոմեանց 5 բ., Ա. Ափրիկեանց 5 բ., Մ. Ա. Տէր-Խաչատրեանց 5 բ., Բ. Խ. Մելիք-Ղափանեանց 3 բ., Ա. Մալաքեանց 3 բ., Ե. Մ. Օհանջանեան 3 բ., Ափրէկ Վեղիրով (պարսիկ) 3 բ., Ղ. Ղազարեանց 2 բ., Գ. Արծրունի 2 բ., Մ. Ափրիկեանց 2 բ., Ս. Աղոյեան 2 բ., Յ. Խաչոյեան 2 բ., Գ. Շերեմանեանց 2 բ., Թ. Գէորգեան 2 բ., Ն. Արեշատեանց 2 բ., Գ. Դայեանց 2 բ., Գ. Բուռնազեանց 2 բ., Օ՛. Մ. Կարապետեանց 2 բ., Ի. Ափրիկեանց 2 բ., Ջանանբաղիր Բէկ (պարսիկ) 2 բ., Պ. Դովլաթեան 2 բ., Մ. Բաղդասեան 2 բ., Եզ. Պետրոսեանց 1 բ., Четвериковъ 1 բ., Յ. Մելիք Ստեփանեանց 1 բ., Յ. Առաքելեանց 1 բ., Ն. Ազիզեանց 1 բ., Պ. Դաչտոյեանց 1 բ. ընդունելով իր վրա և փոստային ծախսն, Ս. Մնացականեանց 1 բ., Ա. Ազիզեանց 1 բ., Խ. Տ. Աբրահամեանց 1 բ., Թ. Յարութիւնեան 1 բ., Ս, Կարապետեան 1 բ., Մ. Արեշատեանց 1 բ., Ս. քահանայ Ազարեանց 1 բ., Կ. Յարութիւնեան 1 բ,, Ստեփան Մամիկոնեանց 1 բ., Ա. Սաղաթելեանց 1 բ., Դասպար և Յակոբ 1 բ., Յ. Կարապետեանց 1 բ., Ս. Ափրիկեանց 1 բ., Հասանբէկ Աբաս ալի օղլի (պարսիկ) 50 կ., Գ. Քօչոյեանց 1 բ., Օ՛. Մ. Նիկողոսեանց 1 բ., Հ. Յակոբեան 1 բ., Մ. Աղաջանեանց 1 բ., Շ. Մելիքեան 1 բ., Գ. քահանայ Տէր-Իսրայէլեան 1 բ., Գ. Սանամեանց 1 բ., Գ. Սհակեան 1 բ., Ա. Մալաքեանց 1 բ., Մ. Գ. Դրիգորեանց 1 բ., Ն. Փիլոյեանց 1 բ., Հոգևոր Ուսումնարանի օրիորդներն 1 բ. 87 կ., տ. վարժուհի Ն. Մելիք-Շահումեանց 1 բ., Հոգևոր ուսումնարանի աշակերտներն 6 բ. 70 կ., և Դ. Գէորգեանց 1 բ.։ Ընդամենը 137 բ. 7 կ.։

Ղազար Ղազարեանց

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի օր, մարտի 17-ին ստացանք պետական բանկի Թիֆլիսի բաժնից 1100 բուբլ, որ նուիրատուութեամբ հաւաքվեցաւ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ յօգուտ թիւրքիայի հայ սովատանջների։ Այսօր հեռագրով կը փոխադրենք 1000 բուբլ, կ. Պոլիս։ Ուրեմն մինչև այժմ յօգուտ սովելոց ընդամենը ուղարկած կը լինենք 15,000 բուբլ։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Եղեկեանցի թարգմանութիւնը Սիլվիո Փելլիքոյի «Հռիմինիացին Ֆրանկիսկէ», Դանտէի «Ֆրանչէսկան», Լէօփարդիի «Ամ Իտալիան» և «Յարնոյ ծերը»։ Այդ բոլոր բանաստեղծութիւնները ամփոփված են մի գրքոյկի մէջ.—Թիֆլիս, 1880 թ. Հ. Լինգեանեանցի տպարան։

—

Հինգշաբթի օր, մարտի 13-ին Թիֆլիսի Ամ-

Թոմաս էֆէնդին բարկանալ չը գիտէր, այսինքն կամենում եմ ասել, որ նա բարկանում էր այն ժամանակ միայն, երբ տեսնում էր, որ իր հակառակորդը իր ատամների յարմար մարդ է, որին կարող է զգզդել, կարող է ուզածին պէս միսը ծամել։ Բայց նա վարդանին վաղուց ճանաչում էր, այս պատճառով, իր անզգոյշ սիալը ուղղելու համար, նա աշխատեց բանին կատակի ձև տալ, ասելով.

—Ցեսնում եմ, որ գինին չատ թունդ էր. օրհնած, ինչու ես այսպան խմում, երբ խմելու չնորք չունես։

Վարդանը խէթ աչքով նայեց նրա երեսին և ոչինչ չը պատասխանեց։ Նրա երեսի վրա կարելի էր նշմարել զզուանք միայն դէպի այդ ցած չողոքորթը։

Ներունին նոյնպէս լուռ էր. նա զգում էր Վարդանի խօսքերի ճշմարտութիւնը, բայց մի և նոյն ժամանակ չէր հաւանում նրա համարձակութեանը, մտածելով, որ մի պաշտօնական մարդու հետ անվայելուչ էր այսպէս խօսել։ Այս պատճառով նա շատ ուրախ եղաւ, երբ ճաշը վերջացաւ, բայց չէր սպասում, որ մի նոր խռովութիւն ևս պիտի ծագէ։

Ճաշելուց յետոյ իսկոյն դանվէ տուեցին, տեղային սովորութեան համեմատ, առանց շաքարի։ Թոմաս էֆէնդին պատուիրած էր, որ ամեն անգամ, երբ ինքը այս տանը դանվէ խմելու լինի, պէտք է նրանից յետոյ ծխելու չիբուխը Ստեփանիկը պատրաստէ,—որովհետև Ստեփանիկի ձեռքով պատրաստած չիբուխը աւելի համով է լինում, ասում էր նա։ Մի զարմանալի գաղտնիք կար այս խեղճ պատանու ճակատագրի մէջ. Ֆաթթահ-բէկը թաչոի տանը հիւր եղած ժամանակ պահանջում էր նրա ձեռքից դանվէ ընդունել, ասելով, թէ «ցատ համով է լինում», իսկ Թոմաս էֆէնդին նոյն մտքով չիբուխ էր պատրաստել տալիս։ Գոնէ քուրդ բէկը գիտէր Ստեփանիկի աղջիկ լինելը և սիրում էր նրան, բայց հայ էֆէնդին նոյնպէս գիտէր այդ գաղտնիքը, նոյնպէս սիրում էր նրան, որ նրա ձեռքով պատրաստված չիբուխը համով էր լինում....

Երբ Ստեփանիկը տաճկական երկար չիբուխը ներս բերեց, և մօտեցաւ, կամենում էր տալ էֆէնդուն, Վարդանը բոլորովին գժվեցաւ։ Նրան յայտնի էր այդ թուրքական սովորութեան կեղտոտ նշանակութիւնը, այս պատճառով նա խլեց պատանու ձեռքից չիբուխը, և դուրս գցելով օդայի պատուհանից, ասաց նրան.

—Չեռացիր, Ստեփանիկ։

Պատանին չուարած դուրս գնաց։

Կարծես չիբուխը էֆէնդու գլխին զարկեցին. նա կատաղեցաւ։

—Այսպիսի հանաքներ ես չեմ սիրում, ասաց նա,— դու անպատուում ես ինձ։

—Քեզ նման մարդիկ պատուի վրա խօսելու իրաւունք չունեն։

—Ը՞ս, ես, այս ամբողջ գաւառի մուլթէզիմը, գոռաց կապալառուն։

—Այո՛, դուն,—այս ամբողջ գաւառի աւազակը։

Կապալառուն մի քանի շարժումներ գործեց, ցոյց տալով, թէ ուզում է տեղից վերկենալ։

—Մի շարժվիր, եթէ ոչ, չան նման կը սատկեցնեմ, ասաց Վարդանը, ձեռքը տանելով դէպի իր սուրը։

Զափթիաներից մէկը մէջ մտաւ.

—Իզուր էք բարկանում, պարոն, էֆէնդին ձեզ խօ մի վատ բան չասեց։

Վարդանը, առանց նրա վրա ուշադրութիւն դարձնելու, կրկին դիմեց կապալառուին, ասելով.

—Լիրը, սովորել էք թուրքերի նման ամեն հայի տուն մտնել, նրա սեղանը լափել, նրա գինին լակել և նրա հարսին, աղջկան, ջահել տղային անարժան ծառայութիւններ անել տալ։ Լիրը...։

Ներունի տանուտէրը մնացել էր քարացած, նրա բերանը փակվել էր, իսկ երբեմն երեսը խաչկնքում էր և Աստուծոյ անուն էր տալիս, որ չարը խափանվի։

Բայց էֆէնդին որքան պոռոտախօս էր, որքան պարծենկոտ էր և որքան վքված սպառնալիքներ կարդալ գիտէր, այնքան էլ աղուէսի նման երկչոտ էր։ Նկատելով ռուսաստանցի երիտասարդի վայրենի կատաղութիւնը, հասկացաւ, որ նրա հետ չէր կարելի վարվել, որպէս վարվում են Ալաշկերտի հայ գիւղացու. հետ. նա իր մօտ սուր ունէր և մօտկոնների թագաւորի հպատակն էր։ Այս պատճառով, իր «փասափուսէն» հաւաքելով, խիստ մեղմ ձայնով ասաց.

—Աստուած էլ գիտէ, որ ես թուրքերի սովորութիւններին չեմ հետևում։ Դու իզուր զրպարտում ես ինձ, Վարդան։

Վարդանը պատասխանեց առաջվայ խռովված ձայնով.

—Ը՞ս եմ զրպարտում.... քեզ, որ թուրքերի մօտ նամազ ես անում, իսկ հայոց եկեղեցու սեղանի վրա պատարագ ես մատուցել տալիս ռամիկների համակրութիւնը գրաւելու համար... քեզ, որ թուրքերի մօտ ասում ես, թէ բոլոր հայերը «գաւուրներ» են, իսկ հայերի մօտ հայհոյում ես նրանց... քեզ, որ թուրքերի կառավարութեան առջև մատնում ես ամեն մի ազնիւ և իր ազգի շահերը մտածող հային... քեզ, որ աւազակների հետ ընկերանում ես և դատարանների առջև սուտ վկայութիւն ես տալիս, թէ հայերը անիրաւացի են բողոքում իրանց հարստահարութիւնների մասին... քեզ, որ տասը տեղ պակվել ես, կին ես առել, քո կնիկները թողել ես և այստեղ կրկին ուզում ես ամուսնանալ...։—Դու չես հետևում թուրքերի սովորութեանը... Բայց ես կասեմ, որ թուրքը հազարապատիկ ազնիւ մարդ է, քան քեզ նման հայը, որովհետև, դու ոչ հայ ես և ոչ թուրք...

Վերջին խօսքը,—թէ էֆէնդին տասը տեղ պրսակվել է և այստեղ կրկին ուզում է ամուսնանալ,—կայծակի նման հարուածեց խեղճ Ներունի թաչոին։ Ախար նա իր Լալային ուզում էր տալ այդ մարդուն, որ Կ. Պոլսում ամիրայ ազգականներ ունէր, որ Բոսֆորի ափերի մօտ պալատ ունէր, որ Օտեանի աղջիկը չէր առել...։ «Ոչ, ոչ, մտածեց նա, Վարդանը զրպարտում է նրան. Թոմաս էֆէնդին խարեբայ մարդ չէ»...

Վարդանը իր սրտի բոլոր մաղձը դուրս թափելուց յետոյ դուրս գնաց։ Նրա բացակայութեան ժամանակ էֆէնդու լեզուն բացվեցաւ.

—Ես անպատճառ կը գրեմ սուլթանին, ասաց նա մի առանձին նշանակութիւն տալով իր խօսքերին,—ես առուսաց թագաւորին էլ կը գրեմ, և անպատճառ այդ անպիտանին Սիբիր կորցնել կը տամ.... Թոմաս էֆէնդու հետ այս տեսակ հանաքներ անել չէ կարելի... «էշին մինչև չը ծեծես, իր չափը չի ճանաչի»...

Թոմաս էֆէնդին սովորութիւն ունէր միշտ մեծ մարդերի անունով սպառնալիքներ կարդալ, և ցոյց տալ թէ ինքը նրանց հետ յարաբերութիւններ ունի, և ինչ որ կամենայ, կարող է կատարել։ Ներունի թաչոն, թէև չիմար մարդ չէր, բայց այնքան շատ հարուածներ էր կերել այս տեսակ մանր էֆէնդիներից, որ միւս գիւղացիների նման ինքն էլ հաւատում էր, թէ նրանք ինչ որ կամենան, կարող են կատարել։ Այս պատճառով, լսելով էֆէնդու վերջին խօսքերը, թէ նա Վարդանին Սիբիր կորցնել կը տայ, վեր կացաւ, և կապալառուի ծնկերը գրկելով, արտասուքը աչքերում ըրկեց աղաչել.

—Ի սէր Աստուծոյ, մի կորցնէք նրան, իմ աչերը գլխին բաշխեցէք, դուք գիտէք, որ նա խենթ է...

Էֆէնդին առժամանակեայ մտածութիւնից յետոյ պատասխանեց.

—Քեզ եմ բաշխում, ծերունի, որովհետև քո տան հացը կերել եմ։

(Կը շարունակվի)